

ԽՍՐԱԳՐՈՒԹԻՒՆ

ԳԱԶԻՐԷ, Օգոստին փողոց
ՌՈՒԳԱԹՔԱՄԻ ճիշդ դիմաց
Pour les annonces s'adresser
à la Rédaction du Journal PHAROS
LE CAIRE — RUE ABDIN
vis-à-vis du «Mokattam»

ԽԱՆՈՒՑՈՒՄՆԵՐ Կ'ԸՆԴՈՒՆՈՒՄ
Մէկ անգամի համար տողը 3 շաբաթ
Մէկ անգամի աւելի ծանուցումներու համար
մասնաւոր պայմաններ:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՆԱԽՏՈՒՆ ՀԱՄԱՐ	
Տարեկան	ՂՋ. 100
Վեցամսեայ	» 55
Եռամսեայ	» 30
ՕՏԻՐ ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱՐ	
Տարեկան	Պր. 26
Վեցամսեայ	» 14

ԵՏ ԶԻ ՏՐՈՒԹԻՐ
ԽՍՐԱԳՐՈՒԹԵԱՆ ՈՒՂՋՈՒՄ
ՈՒՆԻ Է ԳՐՈՒԹԻՒՆ

ՓԱՐՈՍ

Լ. ՐՈՍՏՈՎՈՒՐ
ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՎԱԿԱՆ
ԿՐ. ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԵՐԵՎԱՆԻ, ՀԻՆԳՇԱԲԹԻ ԵՒ ԾԱՐԱԹ ՕՐԵՐԸ
Տնօրէն-Խմբագիր Յ. ԱՂՔԻԱՐ

Ք Ր Օ Ն Ի Կ

Ձմեռնամուտս. — Օրերայի տանտէօգ-
նեղը. — Վերջին դաստասանը. — Գիշ
մըն ալ շոգ-մոգ. —

Կեանքի և աշխատութեան, սիրոյ
և շահու, խրախճանքի և վայելքի
մեծ սէզօնը՝ ձմեռը՝ իր յաղթական
մուտքը մեզ կ'աւետէ մեր մայրերուն
վրայ՝ նետելով զբոսաշրջիկներուն
խումբեր որ ծիծեռնակներն են այս
երկրին:

Սմայէ մը ի վեր արդէն — երբ մենք
ասդին թաղականի խնդիրներով ըզ-
րաղած էինք — քաղաքը կերպարա-
նափոխ եղած է, մեծ ոգևորութիւն
օթեմներու մէջ, շարժում մայրերուն
վրայ, կեանք և ժպիտ ամեն տեղ,
ուրախութիւն ամեն մարդու քով:

Գահիրէ իր ամառնային քունէն
արթնցած, ձմեռնամուտի արդու վար-
դը կ'սկսի:

Սմերիկայի միլիոնատէրները, Անգ-
լիոյ թոքախտաւորները, Գերմանիոյ
հասխոյղները, Եւրոպիոյ ամբողջ յօ-
դացաւէ տառապողները, Տաճկաս-
տանի անօթի ժէօն-թիւրքերը, Ֆրե-
անայի մաշուած քոթօնները և Հա-
յերուն ծեր ոսկերիները հեն ի հե-
հոս կը վազեն հաճոյք, կեանք կամ
ապրուստ մուրալու համար մեր եր-
կիրէն ուր միշտ ժպտող արեւ մը իր
կենսատու ճառագայթները շալլօր-
էն մեզ կը զրկէ Նոյեմբերէն Մարտ:

Ոչինչ այնքան գեղեցկապէս տա-
օրինակ և տարօրինակօրէն հետա-
քըքրօական է որքան Գահիրէի կեան-
քը այս եղանակին մէջ:

Ո՛չ ձիւն, ո՛չ անձրեւ, ո՛չ հով և
ո՛չ ցեխ, ո՛չ փոթորիկ և ո՛չ ցուրտ
չեն գար ազատել մեր օրերը որ
մարգրուէ համբիշի մը հատիկներուն
պէս միօրինակ և փայլուն, իրարու
կը յաջորդեն անզաւար:

Մեծ օթէններէն սկսեալ մինչև հե-
փոքրիկ կրդակները կունակի վրայ
բացած են իրենց դռները սպասելով
զալտեան այն ձմեռնային հիւրերուն՝
թուրիսթներուն՝ որոնք երբեմնի ուղ-
տերուն պէս, իրենց ոսկիները կը թա-
փեն փողոցներուն մէջ:

Գոհարավաճառները, սրճարանա-
պետները, իշապանները, ամեն տե-
վակ խանութպանները, այլամերձ
կինը և անխիղճ անքիֆաճիկ, օձ
խաղցնող արապը, յարաբերութեան
միջնորդները, կեղծ սքարապէ և վի-
էննա շինուած... մոմայի գլուխ ծա-
խող Պէտէվին, ամուսնանալ ուզող
օրիորդները, խաղատներու պաշ-
կաւելի աւագակախումբը, որովայնա-
խաղ Շաֆիհան, Նունկովիչ և Գուք,
կէս-կայսերը և ամբողջ խան-խալիլը
կը հրճուին և կը խայտան, կը ժպ-
տին ու կերպարներ որովհետև ահա՝
ձմեռը եկաւ և թուրիստները կուգան
կոր:

Խաբելու և հարստանալու, աշխա-
տելու և օրուան հացը հանելու ե-
ղանակն է այս որմէ պէտք է օգտուի:
Միայն խեղճ Փարոսն է որ եղա-
նակ չունի... անոր վրայ երգելու
համար իր ցաւերը զորս ամբելու
համար նայէ՝ Մանթաշօքը Եգիպտոս
կուգա՛յ:

Սէզօնին ամենէն նշանաւոր ներա-
ծութիւնն է խալիփական թատրոնին
պարուհիները որոնք հոյլ ի հոյլ, եր-
էկ աւուրնէ ի վեր, կը թափառին
մէկ սրճարանէն մէկալ սրճարանը,
մէկ ճաշարանէն միւսը, ի խնդիր նախ
վարձու սենեակի մը և ապա վարձատ-
րող սիրականի մը որուն կարելի ըլ-
լայ զոյգ մը ամիսներու համար վա-
ձու տալ սիրտ մը՝ հէյդօքօրօք ֆօրսէի
մը տակ ճգմուած:

Կենցաղատէր և հեշտակենցաղ ե-
րիտասարդներ գործի վրայ են, խը-
տիվիալին մէջ թիկնաթոռ մը և քան-
ւեզօղներու մէջ ախորժարեւ հոմանու-
հի մը գտնել իրենց գլխաւոր միա-
հոգութիւնը կը կալեն այս պա-
հուտ, առաջնային վրայ բազմելու և
միւսին հետ բազմանալու համար:

Բամպակի մէջ մեծցած երիտա-
սարդ պէյեր և բամպակով հարստա-
ցած ծեր բայց չնացող ծերուկներ,
իրարու հետ կը մրցին ձեռք անցը-
նելու համար մին՝ որուն գինը տա-
րին 12 ոսկի է և միւսը՝ որուն գինը...
խմուած գինիէն կ'ախում ունի:

Սրտը ուրիշ հոգ չունին:
Քայտառ՝ Միտիլին առնէ կամ ոչ,
Գօշերը յաղթեն կամ յաղթուին,

բանի մը հազար հայ պակսին կամ
աւելնան, հրատարակուած տետրակ-
ները կապոյտ ըլլան կամ դեղին,
Տրակա թագուհին զաւակ մը ունե-
նայ կամ ոչ, խալիլ Թիֆաթին յա-
ջորդէ ֆիլիլ կամ մեծ Սայիտը,
Պապը հիւանդանայ կամ ապաքինի,
այս ամենուն վրայ վայրկեան մը
խաչ չեն մտածեր, հոգեբնին անգամ
չէ, կարեւորութիւն իսկ չեն տար, բա-
ւական է որ թիկնաթոռ մը ունին տա-
կերին և քանակօք մը... քովերին:
Երջանիկ արարածներ են ասոնք
որոնք վերջին դատաստանին կապա-
սեն թիկնաթոռի մը և կնկան մը
բազումներուն մէջ ընկողմանած:

Մեր վերջին դատաստանն ալ ամ-
սոյս 29ին տեղի պիտի ունենայ:

Այս ուրբաթ չէ՛, միւսը, Ընդհա-
նուր խորովը վերջապէս իր նիստը
պիտի ընէ Առաջնորդարանի թիկնա-
թոռներուն վրայ եթէ... Տէրը կա-
մենայ:

Ձեռնհաս մարմինը, հայրախնամ
հոգածութեամբ մը կարծես ժամա-
նակ տալ կուզէ կոր մեր պատուա-
կան երեսփոխաններուն որ ասոնք
մարզանքներ կատարեն և վար-
ժուին... վարժուհին իր տեղը վերա-
հաստելու և կամ տեղէն խախտելու
վճիռը տալու համար:

Ինչ որ ալ ըլլայ մեր ընտրեալնե-
րուն մտածելու և գործելու եղանա-
կը, մտախնդիր է որ արդարութիւնը
առաջնորդէ և կամ Առաջնորդը ար-
դարացնէ իրենց բայելը... դայլերը
զուրս հանելու համար այդ հօտէն
... հոսը չի հանած:

Այս վարժուհի խնդիրը միտքս կը
բերէ Ֆրանսէնէն տուած մը որի ըսէ.
qui se ressemble, s'assemble:

Անգամ մը ես կը շնչառի այդ ա-
ռածին ճշմարտութիւնը, եթէ ի նը-
կատի ամենքը որ այս պահուս օր-
ուան էն կարեւոր խնդիրներն են Մի-
տիլին և... Գալստեան վարժարանը:
Նմանութիւնը գիտէք ուր է. ո՛չ.
ուրեմն ներքեցէ որ ըսեմ. Միտիլին
համբաւը շինած է Մաֆօն, իսկ Գա-
լստեանինը Սօֆին:

Աստուած ողորմի քրոնիկը ստեղ-
ծողին հոգւոյն. առանց այդ վերնադ-
րին, չեմ գիտեր թէ ինչպէս պիտի
կրնայի իրար կապել թուրիսթը և

Գալստեան վարժարանը. միլիոնա-
տէրը և... Փարոսը, սրճարանապետը
և յօդացաւ ունեցողը, Տանտէօքը և
քիւլիկ Սաիտ փաշան, մոմիայի գը-
լուխները և մեր երեսփոխանները, և
այն ամեն յիմարութիւնները որ այս
գրութեանս մէջ կը վիտան:

Յիմարաբար սկսուած յօդուած մը
յիմարաբար չի վերջացնել պարզա-
պէս յիմարութիւն է:

Ուրեմն, քրոնիկս ոտորագրելէ ա-
ռաջ պղտիկ հարցում մը ձեզի՝ ու-
րուն պատասխանը գտնողին ոսկի
ժամացոյց մը նուէր պիտի ընենք...
եթէ Միտիլին տուածը վատտիկնք:

Հիմայ ըսէք տեսեմ, ինչ տարբե-
րութիւն կայ խելօք ձիւն մը և խենդ
քահանայի մը միջև:

Մի փնտռէք, չէք գտնար.
Ահա:
Ձին խելօք ըլլայ նէ կառքի կը
լըծեն իսկ քահանան խենդ ըլլայ նէ
կը լըծեն կարգէն:

Թ. ԱՅ

ՖՐԱՆՔՈ-ԹՐԵԱԿԱՆ ՄԻՋԱԴԵՂԸ

«Ինթրանզիթան»-ի հեղինակաւոր
և սրամիտ խմբագիրը, անգլագլին
Ռօշֆօր, Ֆրանքօ-Թրեակին միջա-
դէպին մէջ ֆրանսական կառավա-
րութեան ըրած ճիւղափոխ առթիւ
հետեւեալը կը գրէ իր թերթին մէջ:

Լօրանտօ-Տէլքաւէ-Վալտէր նախարարու-
թիւնը միևնոյն պարզմտութիւնը ցոյց կու-
տայ: Արեւելքի քրիստոնեաները պաշտպա-
նել ուզելին պարզապէս պատրուակ մըն
կը մէջոց չի հանելու համար ֆրանսական
Ապառիլ համալսի պահանջատէրներն պա-
հանջած 12 միլիոն ֆրանքի կաշառակերու-
թիւնը, բայց այս սուտ — պահանջներուն
մէջ — որոնք մէկ կողմ պիտի ձգուին մի-
լիոնները վճարուելուն պէս — ամենէն զա-
ւեշտափանք սա է որ Սուլթանին կը պա-
հանջուի որ վերջապէս ճանչնայ... Քաղ-
թէացիներուն Պատրիարքը:

Մինչև հիմակ գիտեմք թէ՛ Քաղթեա-
ցիները եղած են աստիքաւորութեան օրէնք-
ներու գիտը ընողները, բայց Պատրիարք
մը ունին եղեր անոնք, բանի որ մեր դեսպանը
Պոլսէն առաւ բաւեց որովհետեւ խալիփան
չուզեց ճանչնալ այդ Պատրիարքին իշխա-
նութիւնը:

Գ. Է. ՄԷԼ ՎԱՃԵԱՆ

ԳԱԶԻՐԷ — ՄՈՒՍԳԻ

ՎԱՃԱՌԱՏՈՒՆ ԺԱՄԱՅՈՅՑՆԵՐՈՒ. ԳՈՀԱՐԵՂԻՆԱՅ ԵՒ ՖՈՆՕԿՐԱՖՆԵՐՈՒ

Կերէի թէ այդ Պատրիարքին անունը
էմմանուէլ է, անուն մը որ քաղթեա-
կան է աւելի՛ ֆրանսական է: Բայց Տէ-
քասէ, Քոնսթանտինոպոլիսի միապետ
հալ բոլոր վարդապետները սա վարդապետ
նիս սոսկալի անանքներու մէջ մեծնին
եթէ Պատրիարքի մէջ կայ մէկը որ այդ
պատրիարքական արարածին զոյնութիւնը
խի գիտէ:

Հիմա հասկցանք որ մտքերնին ստիպել է
եղեր Սուրբաթի օր այդ Ստիպելին տայ Պէրա-
թը և ասոր համար է եղեր որ մարտանաւեր
զրահաւորեցին և երկու հազար նաւազ ոտք
հանեցին կազմելու համար նոր խաչակրու-
թիւն մը որուն Կոստանուա տը Պոլսեանը
եղաւ Գրիգոր Ծովակալը:

Եթէ երբեք Պատրիարք մը կայ որ այս
բաներուն խելք չի հասցուց, ան ալ Գաղ-
թեացի Էմմանուէլն է, երբ մանաւանդ ի-
մացաւ թէ Երանէ և Քոնսթանտինոպոլիսի
ալ կը խառնէին իրենց խղիւղ-զղիւղներն-
ուն մէջ, զինքը առջն կը բռնէ իր թա-
կալակ dalmatidus ին եսեմ իրենց խա-
ղերը խաղալու համար:

Բայց քանի որ այդ Պէրաթը թմբանո-
գի հարուածներով ձեռք անցուցին, այդ
պատուական Էմմանուէլին Պէրաթը, անկա-
րելի է որ կէս ճամբան կանգ առնուն:
Պէրաթ է անպատճառ որ այդ Էմմանուէլը
յոթիւնը մինչև ծայրը հասցնել և պէտք
է երթալ ազատել... Սուրբ Գերեզմանը:
Փանի որ կրօնական միաբանութիւններու
այդ հալածիչները յանկարծ Գաղթեացի կղե-
բակները պաշտպանելու կեցին, բրիտ-
անացի աշխարհին աչքը մտնալու համար,
ինչու Դամասկոսի ճամբան մինչև ծայրը
չեն երթար, որ այնքան մօտ է Երուսա-
ղէմի ուր Պոթոս առաքեալ՝ Վալտէրի պէս՝
բրիտանացիները հալածելէ ետքը, օր մըն
ալ յանկարծ լոյս իշաւ վրան:

Ինչ հիմալի տեսարան պիտի ըլլար,
եթէ գիրուկն Ժողովը՝ Սուրբ Լուդովիկոսի
պէս ապագայիսուած, Ստիպելինս ներու վը-
րայ կոխ երթար, անոնց ձեռքէն ֆրիստո-
սի Գերեզմանը խելով Վալտէրի զահիճին
հաւատքի եկող անպատճառ յանձնէր:
Անշուշտ խորհրդարանի կղերականացան
անպատճառ այս ալլափոխութիւնէն լուր ու-
նէին որ վստահութեան քուէ սուին անց-
եալ օր, այդ միեւնոյն նախարարներուն՝ որ
կղերական միաբանութիւնները ցրուելու ե-
լած էին:

ԹԵՐԹՕՆ «ՓԱՐՈՍ» Ի(27)
ԺԸԼԱՆ ՏՆՎՐԷ

ԲՐԷՆՍ ՄՈՒՐԱՏ
ԵՊԻՏՈՍԱԿԱՆ ԲԱՐՔԵՐԷ ՆԵՐՇԵՉՈՒԱԾ ՎԷՊ
ԳԼՈՒԻ Է.

Ճաշը կ'ընէին գտնուած տեղերին. Իր-
պալի համար ասի միտաւորիչ կամ նոր
բան մը չուներ: Այնպիսի չէր ցաւեր հա-
նրմին սեղանէն զրկուելուն վրայ՝ ուր քա-
նի քանի անգամ իրեն շնորհ մը ըլլալու
համար ընդունուած ըլլալով՝ ամենէն յե-
տին տեղը նստած էր, քանի որ կը տես-
նէր որ այսօր այդ կիները իրեն նկատ-
մամբ կը ցուցնէին նոյն յարգանքը և հը-
պատակութիւնը զոր ինքն ալ մինչև այն
ատեն ցուցուցած էր իր տերերուն:

Ա Չ Գ Ա Յ Ի Ն

Աղքատներու շարքը մեր թղթակիցը շարաւի
օրուն թուականով կը գրէ մեզ:

«Արժանահաւատ աղբիւրներէ քաղած
տեղեկութիւններու համեմատ, Ն. Վ. Պո-
ղոս փաշա բարեկամական շրջանակի մը
մէջ խօսելով յայտարարած է թէ նախկին Թա-
ղական Խորհուրդը ամբողջովին հրաժարած
ըլլալով, ինքը՝ իր անձնական պատասխա-
նատուութեան տակ, առժամայ հանգաման-
քով Թաղականութեան կանչած է այն ան-
ձերը որ այս օր այդ խորհուրդը կը կազ-
մեն, հետեւաբար զարմանք յայտնած է որ
գտնուած են այնպիսիներ որ սահմանադը-
րական անունը տուած են այդ օրինակ կազ-
մութեան մը:

Փաշան նոյնպէս յայտարարած է թէ՛
քիչ օրէն նոր ընտրութիւններ պիտի կա-
տարուին, այս անգամ ճշմարտապէս սահ-
մանադրական խորհուրդ մը ունենալու
համար»:

—Ազգային Երեսփոխանական Ժողովը
որ այնքան անգամ յետաձգուեցաւ, վերջ-
նականապէս տեղի պիտի ունենայ ամսոյս
29ին, ուրբաթ օր:

ՀԱՅ ԿԵԱՆՔՐ

Անցեալ երկուշաբթի օրէն ի վեր քաղաքս
վերադարձած են Տիար և Տիկին Արմենակ
Պէրեան, որոնք հինգ տարիէ ի վեր Գա-
հիւրէ հաստատուած ըլլալով, այնքան հա-
մակիր բարեկամութիւններ կրցած էին ըս-
տեղծել իրենց շուրջը:

Նոյնպէս քաղաքս եկած են հաստատուիլ
Տիար և Տիկին Պետրոս Պէրեան, որոնք
խիստ ծանօթ դէմքեր են Պոլսոյ հայ աշ-
խարհիկ շրջանակներուն մէջ:

—Ամսոյս 9ին Կ. Պոլսի Խոսկիտարի մէջ,
տեղի ունեցաւ Պէրպլեբան հաստատութեան
25 ամեայ յարեւանը: Հակառակ անպատ-
օրին ստուար բազմութիւն մը խանուած էր
յ. խաչի եկեղեցին ուր Պատրիարքը քա-
րօղ մը խօսեցաւ շեշտելով իմաստութեան
և յարաւարութեան պէտքը կեանքի պայքա-
րին մէջ յաջողելու համար: Պատարաքէն
ետքը հրաւիրեալները առաջնորդուեցան Պէր-
պլեբան վարժարանը ու շքեղ սեղան մը
պատրաստուած էր և որուն նախագահեց
Պատրիարքը:

Թէթոս էֆ. Պէրպլեբան ատենախօսու-
թիւն մը կարգաց որուն մէջ բացատրեց
թէ ինք ինչպէս կ'մթնէ ուսուցչութիւնը և
թէ ինչպէս յաջողեր է կրթական առպա-

Այս տեսակ մը մեծութիւնը զոր իր
շնորհակալութիւնը կուտար իրեն հոս, ան-
հաճոյ չէր իրեն. իր էպպէս ըմբոստ և բըռ-
նաւորական բնոյթին յարմար կուգար իր
շուրջը եղողներուն ստիպարայով վարժու-
նը. անոր մէջ՝ իշխանութեան ապահովու-
թիւն մը կը կանխատեսէր այն օրուն հա-
մար յորժմ, իր հիմնական թշնամիներէն
ազատելով, պիտի յաջողէր վերստին ձեռք
անցնել այն գիւրջը զոր չէր կրցած պահ-
պանել:

Եւ սակայն, այս պալատին մէջ, որ
միշտ զատարկ կը թուէր իրեն, կը ձանձ-
րանար:

Ահ ինչ տխուր, երկա՛ր, ահալի՛ օրեր
կ'ապրէր հոն... իր յերազմանքներուն մէջ
խելամուղար, անցեալ գգուանքներուն անմո-
ռանալի յիշատակով:

Միայն պատշգամբ, իր բաց ու արձակ
օդին մէջ փչող գորտուր հոգմով, իր ա-

րէզին մէջ, ճառէն ետքը Պէրպլեբան Է-
ֆէնտի յայտարարեց որ իր յարեւանին
առթիւ հանգանակուած 1098, 39 սակիէն
100 սակի կը նուրէր Ոռոտցաց օգնու-
թեան Միտուկին, 30 սակի վնասը Երաժ-
եան վարժարանին, 20 սակի Մամուրեա-
նի յիշատակին կանգնուելիք արձանին շի-
նութեան, և թէ կատանձնէ որդեգրումը
հինգ որբերու:

Հանդէսը աւարտեցաւ և հանդիսական-
ները բաժնուեցան օգտակար բան մը ըրած
ըլլալու գոհունակութեամբ:

ՀՈՍԿԷ ՀՈՆԿԷ

ՏԱՐՈՐԻՆԱԿ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՄԸ

Անձանօթ և խորհրդաւոր կին մը հե-
տեւեալ մարգարէութիւնները կ'ընէ Լուիվի-
ցի Տօթթ. Ալֆրէտ Լէմպերթի:

«Ինք օրէն գեղեցիկ նոյնգո պիտի մեռնի,
պիտի մեռնի նաև քուսակը զոր արնքան կը
սիրես, պիտի կորսնցնես որսի շունդ, յե-
տոյ դուռն ինքը ալ պիտի մեռնի»:

Անձանօթ կնոջ գուշակութիւնները կ'ի-
րականանան: Տօթթը յանկարծամահ կըլ-
լայ ինչորորօր օրը:

Լուիվիցի ժողովուրդը, օտտիկանական
պաշտօնեաները և բոլոր լրագրողները, այս
միջոցիս կը փնտռեն նորանշան հոգե-
տեսը զոր Տօթթ. Լէմպերթ միայն կը
ճանչնար բայց որուն անունը ոչ ոքի չի
յայտնեց:

Սա չափ միայն բուսած էր իր նշանածին
և իր քրոջ որ իրեն հետ կը բնակէր թէ՛
կին մը նախատեսած էր թէ՛ ինք օր ետքը
պիտի մեռնի, բայց ուն տեղեկութիւն տը-
ւած չէր գուշակութիւն մասին:

Կը թուէ թէ՛ այդ դէպքը անշուքութիւն
ունէր ուրիշ դէպքի մը հետ որ անկէ քա-
նի մը շաբաթ առաջ տեղի ունեցեր էր երբ
Տօթթ. Լէմպերթը կանչուեցաւ տիֆլիզիով
վարակեալ տղայ մը խնամելու: Տօթթին ու
հիւանդին ընտանիքը նոյն կարծեքէն չէին
սիրտին նշաններուն վրայ: Մասնագետը կը
հաստատէ թէ անիծախտ է և կը պահան-
ջէ որ ընտանիքը օրէնքին տրամադրած
կանխազգուշական միջոցներուն ենթարկուի,
իսկ ընտանիքը չուզեց այդպիսի գործողու-
թեան մը խօսքը իմանալ: Տղան մեռաւ:
քանի մը օր ետքը, կին մը Տօթթին
տունը գնաց ամեն տեսակ անձեք անոր
զխիլ թափելու համար: Այս առթիւ է որ
մարգարէութիւնը տեղի ունեցաւ:

զատութեան երեւութիւնը, կարող կ'ըլլար
հաճելի ըլլալ անոր ու միտքերը զանի:

Հոն վերը, անկողին մը կառուցանել
տուած էր սատրի տախտակի մը վրայ զե-
տեղուած մետաքսեայ երկու պատառներով
յորթնուած, և այդ անկողինը վրայ կուգար
կ'ընկողմանէր տըրք մարը մանեկուն պէս:

Շատ անգամ նաև կանուկ կանուխ, լոյ-
սը ծագելուն, կուգար կը նստէր իր նա-
խախրական տեղը, և ամառուան արեգակ-
ներուն՝ խոր մթնոլորտէն դուրս արտաձագող
ջերմին պայծառութիւնը դիտելով:

Նախ և առաջ կարծես արեւելի կողմը
աւելի տեղեկ անկիւն մըն էր գնա թանձ-
րամած խուարին մէջ, շատ հազուադէպ
աստղեր գնա կ'երևէին, յետոյ կ'ետը կը
մեծնար, բոլոր երկիւղին կը հասնէր, միջին
կամարը կը ծածկէր լուսաւոր երանգով մը:

Տօթթ. Լէմպերթը անգամ էր բլիւպի
մը. հոն է որ առաջին անգամ իրեն ե-
ղած տարօրինակ մարգարէութեանը խօսքը
ըրաւ: Գլխէն անցածը պատմեց, առանց
հոգետեսին անունը տալու, պատմութիւնը
ընդմիջելով քահանայներով և իր բոլոր ձեռ-
քով ցոյց տալով որ բնաւ կարեւորութիւն
չի տար եղած գուշակութիւններուն:

Թաշուրդ օրը, որսի գացած պահուն, ի
զուր կանչեց իր շունը, չորքոտանին ան-
յայտ եղած էր ինչպէս նաև նոյնգո ու
քուսակը:

Ինչորոր օրը, իրիկուան, Լէմպերթը
տունէն դուրս ելած միջոցին, քրոջը և նը-
շանածին պէտք եղած պատուէրները տուաւ
իր յուշակալութեան մասին: Փիլիպ գը-
նաց և ամեն օրուն պէս թղթախաղի նստաւ:
յանկարծ թուղթերը ձեռքէն ինկան և ինքն
ալ աթոռին վրայ ինկաւ:

Բոլոր բարեկամները իր շուրջը հաւաք-
ուեցան, բայց ի դուր. Տօթթըրը մեռած էր:

ԱՄԵՆԱՏԵՍ ԱԶԲԵՐԸ

Լիբանանի թերթ մը կը պատմէ թէ Աա-
փիթիւր գեղին մէջ կը գտնուի երիտա-
սարդ աղջիկ մը Աննա Երեսուֆ Նաիլ, ու-
րուն աչքերուն համար կսուի թէ Ռեօթիլեան
ճառագայթներուն յատկութիւններն ու զօ-
րութիւնը ունին: Աղջկան աչքերը կը թա-
փանչեն ուն արեւելքները և կը նկարագրէ
գոց տուփերու պարունակած առարկաները
որքան որ ալ ստուար ըլլան այդ տուփե-
րը: Այս աղջիկը որեւէ կրթութիւն ստացած
չէ ինչպէս իր գեղին բոլոր կիները: Կաղ-
մով տկար, ջղային և կարճատես է:
Այս տարօրինակ ձիւրքը անգնահատելի
արժէք մը կուտայ իրեն իբր վերաբա-
ռօքնական:

Տ Ե Ղ Ա Կ Ա Ն

Թառաջիկայ Թոնուար ամսոյն Նիւ Եօր-
քէն մեկնելով Աղքատներու պիտի հանդի-
Սէլթիք շոգնաւոր որ 800 դրոսաշրջիկ պի-
տի պարունակէ:

Ամերիկայէն առնուած լուրերու համա-
ձայն երեսունի չափ միլիոնաւոր հարուստ-
ներ կը պատրաստուին այդպէս քապիներ
վարձելու այս շոգնաւորին վրայ:

—Երկաթուղիներու վարչութեան ընդհա-
նուր երկրաչափ Պ. Բորթրեյ, երէկ իրի-
կուն մեկնեցաւ Վերին Եփրատի կառա-

որ անասանք անուշութիւն մը ունէր: Աստ-
ղերը մէկիկ մէկիկ կը մարէին. գեղաւա-
րին մէջ նշողներ կը փայլէին, իրերը իրենց
մըրութեանէն դուրս կ'ելլէին. ծառերուն բոտ-
ուերագիծը, իսպի խորիւղ տունները կը
նշմարուէին. արագադիները իրենց զարմու-
մի շնորհը կը հնչեցնէին և հետեւէն, շու-
նի հաշիւներ, էշու մը գոնիչը կը պա-
տասխանէին:

Յետոյ յանկարծ, իր քողերը պատռելով,
արեգակը կը ծագէր, զինքը ծածկող վա-
րագոյն ամպերը ոսկեղնոյ պարփոխներով վա-
նելով. կը բարձրանար աստուածայանու-
թեան լոյսի մը մէջ, արագ արագ վեր կել-
լէր միջոցին մէջ՝ զոր իր անալալը պայ-
ծառութեամբ կը լուսաւորէր: Անոր հետ
միտմին, ամեն բան կ'արթնար իջպալի
շուրջը. գեղը արծաթաշող զանգուածներ
կը թաւալէր, զաւարիքի արտերը կը տըժ-

Գ. Ե Ի Կ. ՄԵԼՔՈՆԵԱՆ

ՄԵԾ ԳՈՐԾԱՐԱՆ ԾԽԱԽՈՏԻ ԵՒ ՍԻԿԱՐԷԹՆԵՐՈՒ
ԶԱՀԻԷ, ԳՈՐԾԱՐԱՆ ԹԷՎԵԻԹԻԹԷ — ԳԼԽԱԽՈՐ ՎԱՃԱՌԱՏԵՂԻ ՆԱԿԻՆ ԶԱԲԹԻԹԷԻ ԾԵՆԻՐԸ

խումբով քննելու համար երկաթուղիի այն գիծը որուն վրայէն պիտի անցնի խտիվը Սուտան կատարելիք ճամբորդութեան միջոցին:

Պատերազմական նախարարութեան պետական զեր-քարտուղար Զոհրապ փաշա նմանապէս պիտի ընկերանայ խտիվին:

Ֆիմանանք նաև որ խտիվական կառավարութիւն հանդիպելիք կայարաններուն պետաբեր շրջաբերական մը ստացան որ կազմարարէ իրենց կառավարութիւն ժամանման ճշգրիտ վայրկեանը և կը պատգարէ իրենց Եզրպտոսի վեհապետին արուելիք պատուները:

Խտիվը հինգ օր պիտի մնայ խարթում, Այդ միջոցին պաշտօնական գումարումներ տեղի պիտի ունենան:

Ն. Բ. Խտիվը ուրբաթ օր կէս օրէն ետքը Ապսինի պալատին մէջ ընդունեցաւ Տաիբէի Սանիէի ընդհանուր քննիչ Բորեղանք փաշա, Պոլսոյ փաշա Նուպար, և Ալիքանլարիյ կառավարիչ Մահմուտ փաշա Սիւրբէ, Ն. Բարձրութիւնը երեկոյին վերադարձաւ Բուպպէի պալատը ուր անցուց շաբաթ օրը:

Մաթարիէի գծին վրայ տեղի ունեցած արկածը իմանալով՝ Ն. Բ. Խտիվը իր Եւպիէ-րիւքէն մին զրկեց արկածին վայրը անկից ընդարձակօրէն իմանալու համար արկածին մանրամասնութիւնները:

Կը հաստատեն թէ Խտիվը կամք յայտնած է որ այդ արկածին պատճառ եղողները խտիվ պատժուին:

Սուտանի կառավարութիւնը մասնաւոր հրամանագիր մը հրատարակած է որ կը նշանակէ թէ ինչ պայմաններու մէջ որ սորգութիւնը պիտի արտօնուի:

Սուտանի կառավարութիւնը հրատարակած է հետեւեալ հրամանագիրը զաւանդներու մէջ թաղապետական Ատեաններու կազմութեան մասին:

1. — Սուտանի ընդհանուր կառավարիչը արտօնութիւն ունի թաղապետական ատեան մը հիմնել Սուտանի այն քաղաքներուն մէջ ուր յարմար պիտի գտաւ այդպիսի մարմին մը գոյութիւնը:

2. — Ատեանը պիտի բաղկանայ ընդհանուր կառավարիչին կողմէ որոշուած հինգ անդամներէ որոնցմէ մին պիտի ըլլայ քաղաքին միւսերը կամ իր կողմէն փոխանորդ կարգուած պաշտօնական ներկայացուցիչը որ նախագահի պաշտօնը պիտի վարէ:

3. — Ատեանին անդամները պիտի դադրին անոր մաս կազմելէ հետեւեալ պարանքներէն:

գունկին, ծառերը անքան բոցերէ ճմուռած, սոչորուած, ժահգով կը ծածկուին:

Տաքութիւնը անչափ կը սաստկանար որ գերուհին ասպիկն բոցատուր փայլաւ, յանքին տակ կը նուազէր և կը փութար իջնել տունը ուր գոյութիւն կը գտնէր:

Օր մը, երբ պատշաճութիւն վրայ նոր ելեր էր, ձիու մը արագութեամբ գոյութիւնը զարմացուց: Նորածագ այգուն լուսին մէջ ջանաց որոշել այսչափ կանուխ առաւ, և տունը գիւղէն անցնող ձիւերին կերպարանը, քանի որ արեգակը կ'երևէր, աչքերը որ հիմայ հեռաւորութեան վարժուած էին, կը նշմարէին երեսպական տարազով և գլուխը ֆէտով մարդ մը որ արագ ալագ կը մօտենար:

Քանի մը ոտտիւնով անցաւ զինքը բնականութենէն բաժնող պողոտայէն, և երբ քանի մը քալ միայն մնացեր էր, գերուհին ճիշդ մը արձակեց:

զայնորուն մէջ. ա. Եթէ մահ պատահէ, բ. Եթէ ուրիշ վիճակի մը մէջ հաստատուի. գ. Եթէ զրաւոր կերպով հրաժարել խնդրէ. դ. Եթէ ընդհանուր կառավարիչին կողմէ պաշտօնանկ ըլլայ:

— Միշտ կուր թէ բաժնակի հունձքը վրանաուեցաւ անցեալ ամսուան անբարեխառնութիւններէն ինչպէս մտախուզ և զովութիւն: Իրօք, երկրորդ հունձքին քաղաքը կարծուածէն շատ նուազ է:

— Մասնաւոր կը ծանուցանեն թէ Հապէշական գաղութին համար շահեկան եղող ամենէն կարեւոր գործերէն մին է Սաւաթիւն Աւմարա երկաթուղիի գծին շինութիւնը: Երկրորդ Հապէշիտանի կիստացոյցը պիտի հայտնայ թէ Յիշեալ գաղութին կառավարիչ Պ. Մարթինի, Հապէշիտանի ոսկիի հանքերուն շահագործութեան ընկերութեան հետ համաձայնած է Սաւաթիւն Աւմարա երկաթուղիին յատկացման մասին:

— Գահրէի կառավարութիւնը ամառոյս 19ին պիտի սկսի թունաւորել տալ Էլպէլի թաղին մէջ թափառող շունները:

ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Կ. ՊՈԼԻՍ, 16 Նոյ.— Միւս Սթոնը ազատելու համար եղած բոլոր ջանքերը անօգուտ եղան: Առանցիկները որոնց պուլկար գիւղացիներ ըլլալը հաստատուած է, մակեթոնական Յաննախոմիւնը հրամաններուն կ'անստան անոր զրամարը լեցնելու համար: Պահանջներն 20,000 անգլիական ոսկիի իջեցուցին, բայց ամբիկացիները չեն ուզեր այդպիսի գումար մը վճարել: (Ռ)

ԼԱՅԷ, 16 Նոյ.— Հորանտական կառավարութիւնը կը յայտարարէ թէ իր չեզոք դիրքը պիտի պահէ հիւսիսային Ամբիկեան Հանրապետութիւններուն մասին: (Հ)

ՊԵՐՍԻԷ, 16 Նոյ.— Խորհրդարանին բացման առթիւ վեհապետին արտասանած ճառը կը զատապարտէ գերմանական ազգերուն վրայ կայսրութեան դրած տուրքերը: (Հ)

ԲԱՐԻՉ, 17 Նոյ.— Մատակարարի հիւսիսաբնակ բազմաթիւ ցեղեր որոնք մինչև հիմա չէին ուզած ֆրանսական իշխանութիւնը ճանչնալ, ֆրանսական զօրքերուն առջև խոնարհած են: Զօրավար մը և տեղակալ մը կուրին մէջ մտան: (Ռ)

ԼՈՆՏՈՆ, 17 Նոյ.— Տուրքի մէջ տեղի ունեցաւ հանքահաններու միջազգային բանակցութիւն մը: Անգլիացի, գերմանացի, և աստրախացի պատգամաւորները մերժեցին

— Սալաւատին: Գաճաճն էր եկողը... յաւիտենական զատապարտութիւնն էր կամ ազատութիւն էր զոր իրեն կը բերէր:

Արդէն երկար ժամանակէ ի վեր գաճաճն հարեմին ներքը մտնելու արտօնութիւն ստացած էր, ուր սև ներքինիէ մը աւելի վտանգաւոր չէր կարծուեր. իր նուրբ յանկարծաբանութիւնները, իր անհեթեթ խեղճը կը զմայլեցնէին մեծ հանքմը որ չէր սիրեր զանի. բայց որ երախտապարտ էր անոր իրեն մատակարարած քանի մը զուարթ ժամերուն համար:

Ոչ ոք իրմէ աւելի զիտեր տապալակաբիթ մտածում մը փարատելու, մտատանջութեան մը նեղութիւնը հալածելու ճամբան, առանց նախնական զատապարտութիւն մը անգամ, առանց որեւէ տեսակ կրթութիւն մը առած

ընդհանուր գործադուլի մը մասնակցել ֆրանսացի հանքահաններուն դատը պաշտպանելու համար: (Ռ)

ԼՈՆՏՈՆ, 17 Նոյ.— Անցեալ շաբաթուան փոխօրէկին միջոցին 64 նաւարկութիւն տեղի ունեցաւ: 177 հոգի ծովամահ եղան: (Ռ)

ՎԱՍՍԵՍԻԷ, 17 Նոյ.— Հանքածուծի խառնուրդները հանգարտ վիճակի մէջ են, բայց գործադուլը երթալով կը տարածուի, 2,000 գործաւոր կը մասնակցին անոր: (Հ)

Կ. ՊՈԼԻՍ, 17 Նոյ.— Սալա փաշա Մեծ Եպարքոս անուանուեցաւ: (Հ)

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԾԽԱՐՔԵՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵՆՈՐԳՈՒՄՆԵՐԸ.— Կը յայտարարեն թէ՛ անհիմն է այն լուրը թէ՛ Ֆրանսան և Ռուսիան մտադիր են դիւանագիտական գործունէութեան մը ձեռնարկել, սակայն իր համար Սուլթանը որ իր Տէրութեան մէջ ներմուծէ Պերլինի պաշտպարին արամագրած վարչական բարեփոխութիւնները:

ԱՌ ՏԵՆԻՉ ՔՕՇԷՆ.— Պուլկարաբնակ հայ փախստականները շնորհակալութեան հետագիւր մը ուղղեցին Տենիչ Քօշէնի ֆրանսական երեսփոխանական ժողովին մէջ Նոյեմբեր 4ին անոր արտասանած ճառին համար:

Պ. ԳՈՆՍԹԱՆ.— Դեռ որոշուած չէ թէ՛ երբ Պ. Գոնսթան Կ. Պոլիս պիտի վերադառնայ: Կը կ'արժուի թէ՛ դեսպանը յառաջիկա շաբաթուն մէջ պիտի մեկնի Սուլթանէն ընդունելու և քիչ ետքը իրեն ներկայացնելու համար զարձի հրամանագիրը, որովհետև քիչ ժամանակ յետոյ Պ. Գոնսթան ուրիշ տեղ պիտի դրուի:

Թուրքիոյ դեսպան Միւնիք պէյ նմանապէս պիտի վերադառնայ Բարիկ, բայց ինքն ալ չպիտի մնայ իր պաշտօնին գլուխը:

Սուլթանին զաղանի գործակատարները որոնք միջադէպին առեւ արտաքսուած էին, Բարիկ վերադառնալու արտօնութիւն պիտի ստանան նորէն հսկելու համար Երիտասարդ Թուրքերուն և Հայերու շարժումները:

Ա Ձ Դ

ՏԻԿԻՆ ՏԻՐՈՒՀԻ ԳԱՆՔՆԵՐ ՓԷՇՏԻՄԱԼՃԵԱՆ, արեւելեան և եւրոպական երաժշտութեան մասնագէտ, Պոլսէն այս անգամ Գահրէ եկած ըլլալով, պատրաստ է դաշ-

ըլլալու, այնպիսի բառեր գտնել, այնպիսի պատմութիւններ ալ յափոյ ընել գիտէր, որ բոլոր պալատին հրճուանք կը պատճառէին:

Ինչպալի մեկնելէն ի վեր, կարելի էր ըսել թէ գաճաճին բովանդակ խեղճ ալ իրմէ գացեր էր. ալ ամենին առջի սիրուն միմոսը չէր, այն զոր Մուրատ կը պատուէր իր վստահութեամբ և բարեկամութեամբ: — Սալաւատին, զուարթ, արախօս Սալաւատինը այլեւ խեղճ ծագելի էակ մը, անմոռնչ կենալով կենալով ապուշ դարձած, լուրջ ըլլալով ըլլալով պիտի եղած հակա մը դարձած էր:

Սա ալ կար որ բրէնսը տարօրինակ կերպով վարուած էր իր միմոսին հետ:

Երկար առեւէ ի վեր, Մուրատ 'աշմա'րած էր այն յիմար հրայրքը զոր Ինչպալ

նակի դասեր տալ, նորադոյն մէթոտով, իրեն դիմող ուշակերտաց:

Փափաքողները պէտք է դիմեն Տիար Ս. Մաճարեանի գրասենեակը, Պապ-Էլ-Հասիս փողոց թիւ 31:

7—20

ՏԻԿԻՆ Է. Ա. ԱՐՍԼԱՆԵԱՆ ԴԵՐՁՈՒՀԻ

Քաղաքիս մէջ ծանօթ այս դերձակուհին պատիւ ունի ծանուցանելու իր բազմաթիւ յաճախողներուն ինչպէս նաև յարգոյ հասարակութեան թէ՛ այս անգամ իր Պապ-Էլ-Լուքի աթըրլիէն փոխադրած է Պապ-Էլ-Հասիս փողոց Տէպպանէի 'նորաշէն տան' մէջ, առաջին յարկ թիւ 3 արարթամանը:

3—10

ԱՂԵՔԱՆԴՐԻՈՅ ՍԱԿԱՐԱՆ ԱՐԺԵԹՈՒՂԹԻ

Աղեքսանդրիա, 18 Նոյեմբ.	
Բրիլիլէժիէ	99 3/4
Իւնիֆիէ	106 /—
Տայիքա Սանիյէ	103 /—
Տօմանեալ	105 1/4
Թրքական Գոնսթիտէ, սեռի Ս	23 55.
Րումէլի Երկաթուղի	Քր. 102 /—
Քանալ տը Սիւէզ	» 3746 /—
Քանալ տը Սիւէզ օպիլի	» 645 /—
Նաշ. պանք օֆ Էնլիթ Ա. Ո.	10 7/8
Աղեքս. Թրամվէյ (Երիւ.) Քր.	49 1/12
(Աղեքսանդրիոյ Թրամվէյ)	
»	24 1/2
Քրէտի ֆոնտէ Էդ. աքսիօն	» 553 /—
Քրէտի ֆոնտէ 3 Օ/0	» 264 1/2
Ջրի Ընկ. Գահրէ	» 631 /—
» Աղեքսանդրիա Ա. Ո.	35 3/4
» Թանթա	» 12 /—
Պէնէրայի անանուս ընկ.	» 48 /—
Ինքիլիս մարքէթա օպլ. 5 Օ/0	» 100 /—
»	» 0. 16. 3
»	» 0. 15. 3
Նաւկոմիլի Օթէլ	» 4. /—

ԲԱՄՊԱԿ ԵՒ ԱՐՄՏԻԲ ԲՕՆԴՐԱ

Աղեքսանդրիա, 18 Նոյեմբ.	
Բամպակ. Նոյ. Թալր.	9 23/32 /—
» Թուշի.	» 9 31/32 — /
» Մարտ	» 9 25/32 — /—
Պիդր. Նոյ. Դեկ. Յուն.	
»	» 61 35/49 — /—
» Իւստ. մարտ	» 62 1/2 — /—
Բակլա Նոյ. Դեկ. յվ.	» 94 1/2 — /

ներշնչած էր գաճաճին. գերուհին այն ժամանակ օծանեալ կնոջ իր բոլոր փառքին, սիրուած կնոջ իր բովանդակ յաղթանակին մէջ էր:

Այն ժամանակ դեռ իր իշխանութեանը վրայ վստահ եղող Ինչպալի անգութ հեգնութիւնները որոնց տակ բրէնսը անպարկէրիմէր զանի, չէին կրցած գաճաճին սըրտին մէջ մարել չէրէք կնոջ գեղեցկութեանէն վառուած կրակը:

Բրէնսը և գերուհին վերջապէս սկսած էին ծագել զայն անհոգութեամբ. բայց օր մը երբ Մուրատ, մօրմէն զրգուելով, մանկամարդ կնոջը գէմ բարկացիւր էր՝ յիշելով վերջապէս թէ աւեր ինքն էր և իր րաւունք ունէր զանի իր բաղձանքին հպատակեցնելու, սրամիտ միմոսը տեսած էր Ինչպալը բոլորովին արտասուելից:

(Շարունակելի) Թարգմ. Յ. ՍԵԹԵԱՆ

Յ. ԲԷՄՊԷՃԵԱՆ ԵՒ ԸՆԿ.

ՄԵԾ ԳՈՐԾԱՐԱՆ ԾԽԱԽՈՏԻ ԵՒ ՍԻԿԱՐԷԹՆԵՐՈՒ

ՄԹԵՐԱՆՈՑ ԵՒ ՎԱՃԱՌԱՏԵՂԻ — ԳԱՀՐԷ, ԱՌԱՊԱ-ԷԼ-ԽԱՏՐԱ, ՆԱԽԿԻՆ ԶԱՊՈՒՅԷԻ ՇԷՆԳԻՆ ԴԷՄ

Մ Ո Ւ Ջ Ո Ւ Ա Ն Լ Ա Յ Յ

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ՆԻՒԵՈՐԻԻ ԱՄԵՐԻԿԵԱՆ ԿԵՆՍԱՑ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀԱՍՏԱՏՈՒՄ 1843 ՎՅ

ՊԱՀԵՍՏԻ ԳՈՒՄԱՐ ՄԷԿ ՄԻԼԻԱՌ 563 ՄԻԼԻՈՆ 961 ՀԱՋԱՐ ՖՐԱՆԿ

Ապահովագրական ամեն կարելի դրուբիւնները կը գո ծաղիւն. խառն ապահովագրութիւն, ամբողջ կեանք, զաւակաց դրամագրութիւն, ցումն եկամուտ, եւայլն

ՄՈՒՋՈՒԱՆ ԼԱՅՅԻ սակագինը և ապահովագրութեան դանազան գրութիւնները չուսումնասիրած մի՛ ապահովագրուիք. — Առատաձեռն պայմաններու Տեղեկութեանց համար դիմել ի Գահիրէ առ ՊՊ. Ն. ԲԻՐՉԻՍ և ժ. ՎԱԼԵՆԵ, Ընդհ. ներկայացուցիչք: Աղբիւրներու Անթ. Թ. ՌԱԼԻ, գլխաւոր գործակալու: Գ. ԵԿԱՆՈՅ Դեր-Գործակալ ի Գահիրէ

ԳՐԷՏԻ ԼԻՕՆԵՒ

ԼԱՅՅԱՆՈՒՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
ԴՐԱՄԱԳԼՈՒԻ 200,000,000 ՖՐԱՆԿ
ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՔ ՑԵԳԻՊՏՈՍ
ԱՂԵՔՍԱՆԴՐԻԱ-ԳԱԶԻՐԷ ԲՈՒ-ՍԱՅԻՏ

ԳՐԷՏԻ ԼԻՕՆԵՆ կ'ստանձնէ ամեն տեսակ սեղանաւորական գործողութիւններ, ինչպէս փոխառութիւն արժէքաւոր թուղթերու վրայ:

Ընթացիկ հաշիւներ կը բանայ արժէքաւոր աւանդներու վրայ:

Ֆրանսայի և օտար երկիրներու վրայ կուտայ չէքեր, փոխանակագրեր, և վարկագրեր:

Կը դանձէ եգիպտոսի և արտասահմանի վրայ քաշուած փոխանակագրեր:

Աւանդ. ձգուած դրամներուն փոխարէն կանխորոշ պայմանաժամով մուծակներ կուտայ:

ԽՏԻՎԱԿԱՆ ՇՈԳԵՆԱԽԱՅԻՆ ԸՆԿ.

ԵՐԹԵՒԵԿՈՒԹԻՒՆ

ԱՂԵՔՍԱՆԴՐԻՈՅ ԵՒ Կ. ՊՕԼՍՈՅ ՄԻՋԵԻ

ԱՌԱՋՆԱԿԱՐԳ ՇՈԳԵՆԱԽԵՐՈՎ

ՅՈՒՆԱՏԱՆԻ ԵՒ ԹՈՒՐԻՈՅ ԳԻՐ

ԵԱԲԱԹԱԿԱՆ ԵՐԹԵՒԵԿՈՒԹԻՒՆ

ՄԵԿՆՈՒՄ. — Ամեն չորեքշաբթի օր ժամը 4ին (յ. մ.) դէպի Բերէա, Իզմիր, Միսիլի և Կ. Պօլս:

ԺԱՄԱՆՈՒՄ. — Միենոյն նաւահանգիստներէն ժամանում յԱղբիւրներու ամեն Շաբաթ օր, առաւօտեան ժամը 7ին:

ԾԱՆՈԹ. — Ճամբորդները բաւական ժամանակ կ'ունենան շոգենախները Բի.

րէա հանդիպելուն, Աթէնք այցելել:

ՍՈՒՐԻՈՅ ԳԻՐ.

ՄԵԿՆՈՒՄ. — Ամեն շաբաթ օր ժամը 4ին (յ. մ.) դէպի Բօս-Սայիտ, Եաֆա, Հայֆա, Պէլլոս, Տրիպօլիս, Մէրսին և Իսկէնտէրուն:

ԺԱՄԱՆՈՒՄ. — Միենոյն նաւահանգիստներէն ժամանում յԱղբիւրներու ամեն Չորեքշաբթի առաւօտեան ժամը 6ին: Տասնընէնգ օրը անդամ մը՝ երթեկի կարմիր

Ծովու հետեւալ նաւահանգիստներու միջև.

ՃԻՏՏԷ, ՍՈՒԱՔԻՆ, ՀՕՏԷՅՏԱ, ԱՏԷՆ

Ճամբորդութեանց և ապրանքայ համար դիմել Ընկերութեան Աղբիւրներու, Բօս-Սայիտի, Սիւէզի և Գահիրէի գործակալութեանց, ինչպէս նաև Բուրքի ամեն մասնաճիւղերուն:

1-1902

ՏՕՔ. Ա. ԹԱՀՄԻՉՕՅ

Փորձառու բժիշկ արդէն Պոլսոյ և փոքր-Ասիոյ կողմերը տարիներով իւր արհեստը ի գործ դրած և յետոյ Բարիդի հիւանդանոցներուն մէջ ներքին հիւանդութեան իր մասնագիտութիւնը կատարելագործած ըլլալով, վերջերս ժամանակ մը Սօֆիայի կեդրոնական հիւանդանոցին մէջ ծառայելէ ետքը այս անգամ եկած է հաստատուել ի Գահիրէ:

Առ ժամապէս կը գտնուի ի Ջէյթուն, կ'ընդունի իրեն դիմող հիւանդները, առաւօտեան ժամը 10—12 Պ. Բիւրիտիսի դեղարանը, և կէս օրէն յետոյ 3էն 5 Պ. Տիւրքիի դեղարանը յէզպէլէ:

Երեքշաբթի և շաբաթ օրերը աղբասները ձրի կը դարմանուին:

ԼԵԻՈՆ ԿԻՒՄԻՏԵԱՆ

—X—

ՎԱՃԱՌԱՏՈՒՆ ԺԱՄԱՅՈՅՅԻ ԵՒ ԳՈՀԱՐԵՂԵՆԵՐՈՒ

ԴԱՀԻԼԷ, Մուսի փողոց,

Ն. եւ Ս. Սիսնաիի վաճառատան դէմք

Ապրանքայ զանազանութիւն

Երաշխաւորութիւն

Աժանութիւն

Ճոխ հաւաքածոյ Ամերիկեան և Ֆրանսական ժողովրդականութիւն

Ծանօթ: Վարպետ ժամագործ մը յաճախորդներու տրամադրութեան տակ կը գտնուի: ԱՅՅԵԼԵՏԷՔ ԵՒ ԳՈՀ ՊԻՏԻ ՄՆԱՔ

Ռ Ո Ւ Ս Ա Կ Ա Ն

ՇՈԳԵՆԱԽԱՅԻՆ ԵՒ ԱՌԵՒՏԲԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ԲՂԹԱՏԱՐԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԻՐ ԵՐԹԵՒԵԿՈՒԹԻՒՆ

Ի մէջ ԱՂԵՔՍԱՆԴՐԻՈՅ, ԲԻՐԷԻ, ԻՋՄԻՐԻ, Կ. ՊՈԼՍՈՅ, և ՕՏԷՍՍՏԻ

Հետեւեալ նոր և առաջնակարգ շոգենախներով

ԱՆԲԸՐԷՕՐ ՆԻՔՕԼԱ. արդթ. թօն. 5500	ՉԻԱՋՅՈՅ տարադրութիւն թօն 5500
ԲԷՆ ՕԼԿԱ. " " 5500	20Ր " " 5500

ԵԱԲԱԹԱՐ ԱՆԳԱՄ ՄԸ կ'ունենաւ մեկնում Աղբիւրներու դէպ ի Օտէսա, հանդիպելով ԲՈՒ ՍԱՅԻՏ, ԻՋՄԻՐ, ՏԱՐՏԱՆԷԼ և Կ. ՊՈԼԻՍ արդէ անմիջական հաղորդակցութիւն ընկերութեան այն շոգենախներուն հետ որ ուղղակի կ'երթան ՍԷՎԱՍՏՈՓՈԼ, ՍԵԻ ԾՈՎՈՒ ՍՈՒՄԱՆ ԵՋԵՐՔՆԵՐԸ, ԿՈՎԿԱՍ, ԽՐԻՄ և ԱՋՈՅԻ ԾՈՎ:

ԵԱԲԱԹԱՐ ԱՆԳԱՄ ՄԸ մեկնում Աղբիւրներու դէպ ի ԲՈՒ ՍԱՅԻՏ, ԵԱՅԱ, ՊԷՅՐՈՒԹ, ՏՐԻՊՈԼԻՍ, ՄԷՐՍԻՆ, ԲԻՈՍ, ԻՋՄԻՐ, ՍԵԼԱՆԿ, ՏԱՐՏԱՆԷԼ և Կ. ՊՈԼԻՍ:

ԴԻՍԵԼ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԵԱՆ

Աղբիւրներու, Թիքասան փողոց:

ԵԳԻՊՏԱԿԱՆ ԱՋԳԱՅԻՆ ԴՐԱՄԱՏՈՒՆ

Հաստատեալ խորվական Հրամանագրով
25 Յունիս 1898

Դրամագրութիւն Անգլ. ոսկի 1,500,000
Պահեստի դրամ " " 193,000

Կառավարիչ. Սըր Էլլին Բալմէր.

Ընդ. կեդրոն ի Գահիրէ. Մասնաճիւղեր.

Աղբիւրներու, Մանսուրա, Խարթում, Եգիպտական Ազգային Դրամատունը կ'ընդունի աւանդներ, դրամ փոխ կուտայ և ընթացիկ հաշիւներ կը բանայ ապրանքի և արժէքաւոր թուղթերու վրայ:

Կը դնէ և կը վաճառէ արտասահմանի վրայ քաշուած փոխանակագրեր և կը ստանձնէ ամեն տեսակ սեղանաւորական գործողութիւններ.

ԴՓՈՒՐԱՄԱՐՈՒԹԻՒՆ

ԵՒ ՄՐՏԱԽԱՆՈՒԹԻՒՆ

Ստամբուլ. հիւանդութիւնը շատ անգամ գծաւորամարտութիւն, սրտի խառնուրդ, բուժմանը, պիտուի ինչ և փոխում առաջ կը բերէ, ինչ որ հիմնադէս բուժելու համար պետք է ամեն ճաշէ փէլ ԲԷԿԼԻՍ ՍԱՆԿԻՆԷՐ անուն աղբիւր գեղէն մէջմէջ քիչ առնել:

ԲԷԿԼԻՍ ՍԱՆԿԻՆԷՐ Կրիշ աղբիւրներէ և քիւրու նման չի խանգարեր ստամբուր:

Կը ծախուի տանի մեծ գեղարաններու մէջ: